

---

---

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ  
ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀՀ-ՈՒՄ**

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ Վ. Ս.

Ներկայումս ՀՀ-ում ակտիվ աշխատանքներ են ընթանում հաշվապահական հաշվառման համակարգի կատարելագործման ուղղությամբ: Խոսքը մասնավորապես ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ների) անցման ուղղությամբ կատարվող քայլերի մասին է: Նախ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ են ՖՀՄՍ-ները, և որ կառույցի գործառույթների մեջ է նշված ստանդարտների մշակումը: Այս ստանդարտների մշակմամբ զբաղվում է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՄԽ), որն անկախ, մասնավոր աղբյուրներից ֆինանսավորվող հաշվապահական ստանդարտներ մշակող կազմակերպություն է: ՀՀՄՄԽ-ի գրասենյակը Լոնդոնում է: Խորհրդի մշակած ստանդարտները ողջ աշխարհին հայտնի են անգլերեն IFRS (International financial reporting standards) անվանումով: Խորհուրդը բաղկացած է 15 անդամից, որոնք ներկայացնում են 9 երկիր: Խորհրդի անդամների թվում են աուդիտորներ, ֆինանսական հաշվետվություններ կազմողներ, օգտագործողներ և գիտական շրջանակներ ներկայացնող անձինք<sup>1</sup>: Այսպիսով հնարավորինս ներկայացվում են հանրության բոլոր այն խմբերի շահերը, ովքեր այս կամ այն կերպ առնչվում են ֆինանսական հաշվետվությունների հետ: Այս խորհրդի նպատակն է մշակել բաժրորակ, օգտագործողների համար մատչելի համաշխարհային հաշվապահական ստանդարտներ, որոնց կիրառումը կհանգեցնի ֆինանսական հաշվետվություններում թափանցիկ ու համադրելի տեղեկատվության ներկայացման: Խորհրդի նպատակներից է ստանդարտների կիրառման ապահովումը հնարավորինս շատ երկրների կողմից, որի իրագործման նպատակով համապատասխան աշխատանքներ են տարվում ազգային հաշվապահական ստանդարտներ մշակող ասոցիացիաների հետ: Այս համագործակցությունը նպատակաուղղված է ՖՀՄՍ-ների և ազգային ստանդարտների համատեղ օգտագործման ճանապարհով հաշվապահական բաժրորակ ու հանրության համար ընդունելի լուծումների ստացմանը, որն ի վերջո կհանգեցնի ֆինանսական հաշվետվությունների որակի բարձրացմանը, ինչպես նաև տարբեր երկրներում գործունեություն ծավալող կազմակերպությունների ֆինանսական արդյունքների համադրելիությանը<sup>2</sup>: Նշված կառույցի հեղինակության մասին է վկայում նաև այն փաստը, որ Եվրախորհուրդը հենց ՀՀՄՄԽ-ին է վստահել Եվրամիության ողջ տարածքում հաշվապահական հաշվառման ստանդարտների մշակումը և ներդրումը: Որպես վերը նշվածի ապացույց՝ թերևս կարելի է միայն նշել այն

---

<sup>1</sup> <http://www.iasb.org/The+organisation/Members+of+the+IASB/Members+of+the+IASB.htm>

<sup>2</sup> <http://www.iasb.org/The+organisation/IASCF+and+IASB.htm>

կարևոր հանգամանքը, որ սկսած 2005 թ.<sup>3</sup> Եվրամիության սահմաններում գրանցված բոլոր էմիտենտ ընկերությունները պետք է կազմեն իրենց կոնսոլիդացված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՄ-ներին համապատասխան<sup>4</sup>: Այս կառույցը նաև ակտիվորեն համագործակցում է ՄԱԿ-ի միջազգային հաշվապահական ստանդարտների և հաշվետվությունների խմբի հետ (UN IASB group), որը, օգտագործելով ՄԱԿ-ի հզոր ներուժը և աշխարհի տարբեր երկրներում վերջինիս առկայությունը, փորձում է առավելապես թույլ զարգացած և զարգացող երկրների տարբեր հաշվապահական մարմինների ձայնը հասանելի դարձնել ՀՀՄՄ-ին: Ներկայումս խորհուրդը բանակցում է նաև ԱՄՆ-ի Ֆինանսական հաշվառման ստանդարտների խորհրդի (FASB) հետ ԱՄՆ-ի և Եվրոպայի հաշվապահական հաշվառման համակարգերը հնարավորինս մերձեցնելու նպատակով<sup>4</sup>: Այս համագործակցության վերջնական նպատակը ամերիկյան ընկերությունների կողմից իրենց ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ՖՀՄՄ-ների կիրառումն է, որի իրականացման դեպքում կարելի կլինի ասել, որ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները կդառնան հիմնական գլոբալ ֆինանսական ստանդարտներ, քանզի ԱՄՆ-ի պես գերտերության նշած ստանդարտների կիրառումը շեշտակիորեն կբարձրացնի այս ստանդարտների միջազգային հեղինակությունը:

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի մեկ այլ նվաճում 2009 թ. հուլիսի 9-ին շուրջ հինգ տարվա արդյունավետ աշխատանքներից հետո միջազգային նոր ստանդարտների մշակումն է՝ հատուկ նախատեսված փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) համար: Ներկայումս ՀՀՄՄ-ն ակտիվ աշխատանքներ է տանում փոքր և միջին ձեռնարկությունների համար նախատեսված նոր ստանդարտների ներդրման ուղղությամբ: Սրանք կարող են փոխակերպել ամբողջ աշխարհի մասնավոր ընկերությունների հաշիվները կազմելու գործընթացը: Դրանք բացառիկ հնարավորություն կընձեռեն աշխարհի մասնավոր ընկերություններին ստանդարտացված հաշվապահական հաշվառման համակարգ ստեղծելու համար: ՓՄՁ-ների համար մշակված ստանդարտները մասնավոր հատվածի ընկերությունների համար մշակված, միջազգայնորեն ճանաչված հաշվապահական սկզբունքների մի փաթեթ են: Հիմնված լինելով ՖՀՄՄ-ների ամբողջական տարբերակի վրա, որ մշակվել էր հատկապես խոշոր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները կազմելու կարիքների բավարարման նպատակով, նոր ստանդարտները մասնավորապես օգտակար կլինեն միջազգային գործունեություն ծավալող ՓՄՁ-ների համար: Յուրաքանչյուր երկիր այժմ արդեն կարող է հաշվի առնել այս ստանդարտների գոյության փաստը, քննարկել դրանք տեղի շահառուների հետ և որոշել, թե արդյո՞ք այն կիրառելի է տվյալ երկրում, և ե՞րբ է հնարավոր դրա ներդրումը: Յուրաքանչյուր երկիր նաև ինքը կընտ-

<sup>3</sup> ACCA paper F7 (financial reporting) published by BPP Learning Media, UK 2009, page 25.

<sup>4</sup> <http://www.accountancyage.com/accountancyage/news/2260750/iasb-concerns-voiced-global>

րի, թե որ կազմակերպությունների համար են կիրառելի նոր ստանդարտները<sup>5</sup>:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը մեկ անգամ ևս փաստեց ֆինանսական հաշվետվությունների միասնական գլոբալ ստանդարտների ձևավորման անհրաժեշտությունը: Ներկայիս տրնտեսական ճգնաժամը, ի լրումն ամեն տեսակի բացասական երեվոյթների, որ բնորոշ են ճգնաժամերին, նաև ի ցույց դրեց հաշվապահական հաշվառման ստանդարտների բազմաթիվ թերությունները, քանի որ գոնե մասնագետների համար ակնհայտ է, որ հաշվապահական ստանդարտները չկարողացան կատարել իրենց վերապահված հիմնական առաքելություններից մեկը՝ ժամանակին բացահայտել ֆինանսական համակարգի լրջագույն խնդիրները: Դրա հետևանքով, եթե նույնիսկ հնարավոր էլ չլիներ ընդհանրապես խուսափել ներկայիս տնտեսական ճգնաժամից, գոնե կարելի կլիներ նվազեցնել ներկայիս ճգնաժամի խորությունը՝ շնորհիվ նախաճրգնաժամային կանխարգելիչ միջոցառումների: Ընդամենը երեք տարի առաջ, երբ ի հայտ եկան ամերիկյան խոշորագույն բանկերի իրացվելիության նվազման հետ կապված առաջին ախտանշանները, այդ նույն բանկերի ֆինանսական հաշվետվությունները վերլուծելիս հնարավոր չէր կանխատեսել ոչ միայն այսօրվա ֆինանսական ճրգնաժամի մոտալուտ գալուստը, այլև անգամ նման վտանգի առկայությունը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ տարիների ընթացքում համաշխարհային գլոբալացման պայմաններում տարբեր երկրների ֆինանսական համակարգերի գերաբազ ինտեգրացիայի ու ֆինանսական նորանոր գործիքների երևան գալու հետևանքով առաջացել են ռիսկեր, որոնք ներկայումս գոյություն ունեցող ստանդարտները չեն կարողանում պատշաճորեն ի ցույց դնել: Նշված խնդիրների հանգուցալուծման նպատակով ՀՀՄՄ-ն արդեն իրականացնում է համապատասխան աշխատանքներ նոր ստանդարտներ մշակելու, ինչպես նաև արդեն իսկ գործածության մեջ դրված ստանդարտներում առկա թերությունները վերացնելու ուղղությամբ: Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ, քանի որ տնտեսական համակարգը քարացած հասկացություն չէ և անընդհատ դինամիկ զարգացման մեջ է, որի շնորհիվ էլ առաջանում են նորանոր մարտահրավերներ, որոնց դիմակայելու համար էլ անհրաժեշտ է ՀՀՄՄ-ի ճիշտ ժամանակին ու համարժեք պատասխանը՝ ստանդարտները արդիականացնելու ճանապարհով: Այս խնդիրների համատեքստում մեծ արդիականություն են ստանում ՀՀ կառավարության՝ ՀՀ հաշվապահական հաշվառման համակարգը միջազգային հաշվապահական համակարգին ինտեգրելու ուղղությամբ կատարվող քայլերը, մասնավորապես ՀՀ ֆինանսների և էկոնոմիկա- յի նախարարության նախաձեռնած հաշվապահական հաշվառման ոլորտի բարեփոխումների իրականացման ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պաշտոնական թարգմանության աշխա-

<sup>5</sup> [http://www.cdaily.am/home/paper/2009\\_01\\_21/news/15396/](http://www.cdaily.am/home/paper/2009_01_21/news/15396/)

տանքների կատարումը: Այն հնարավորություն կընձեռի անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների ճանապարհով ՀՀ հաշվապահական հաշվառման գործող ստանդարտները համապատասխանեցնելու միջազգային պահանջներին: Երկարատև բանակցությունների փուլից հետո ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության՝ որպես հաշվապահական հաշվառման ոլորտի կարգավորումն իրականացնող կառավարության լիազորած պետական մարմնի և ՀՀՄՄԽ-ի միջև համաձայնություն ձեռք բերվեց ստանդարտների պաշտոնական թարգմանության իրականացման հարցում, որի շնորհիվ «Սահմանափակ տարածքներում հեղինակային իրավունքից հրաժարվելու վերաբերյալ» երկկողմ համաձայնագիր ստորագրվեց: Դա առաջին քայլն էր ոլորտում բարեփոխումների ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու գործում: Նշված աշխատանքների պատշաճ կազմակերպման ֆինանսավորումն ու մասնագիտական օժանդակությունն ապահովում է ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալությունը (USAID)<sup>6</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ ՖՀՄՄ-ների անցման ուղղությամբ տարվող աշխատանքները Հայաստանում վաղուց են մեկնարկել: Դեռևս 2002 թ. միջազգային ստանդարտները թարգմանվեցին հայերեն, հրապարակվեցին և օգտագործվեցին «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը մշակելիս, սակայն, ինչպես արդեն նշվել է, այս ստանդարտները կայուն չեն և ենթարկվում են մշտական ու էական փոփոխությունների, իսկ վերջիններս, որքան էլ ցավալի է, հետագայում ֆինանսական ռեսուրսների բացակայության հետևանքով չեն թարգմանվում հայերեն<sup>7</sup>: Այսինքն՝ ՀՀ-ում ստեղծվել է մի իրավիճակ, որ ժամանակ առ ժամանակ ֆինանսավորման առկայության պայմաններում փորձեր են կատարվում ՖՀՄՄ-ները ներդնելու ուղղությամբ. դրանք, վերջին փոփոխություններով հանդերձ, թարգմանվում են, սակայն կարճ ժամանակ անց կրկին պարզվում է, որ ստանդարտներն արդեն հնացել են և անհրաժեշտ է սպասել միջազգային կազմակերպությունների բարի կամքի նոր դրսևորմանը. խոսքը, իհարկե, ֆինանսական միջոցների նոր հատկացումների մասին է, որպեսզի ստանդարտներն արդիականացվեն: Այս մոտեցումն անթույլատրելի է, և ժամանակն է, որ մեր կառավարությունը միջոցներ ձեռնարկի ՀՀ-ում մշտապես գործող պրոֆեսիոնալ հաշվապահների ու թարգմանիչների հանձնաժողովի ձևավորման ուղղությամբ, որի գործառույթների մեջ կմտնեն ՖՀՄՄ-ների վերջին փոփոխություններին հետևելը, դրանց պատշաճ հայերեն թարգմանությունը, այլև հայաստանյան ընկերությունների շրջանում համապատասխան խորհրդատվական աշխատանքների իրականացումը սեմինարների, կլոր սեղանների, բանավեճերի միջոցով, որոնք ի վերջո կնպաստեն նշված ստանդարտների զանգվածային կիրառությանը տնտեսավարողների կողմից: Ի լրումն այս ամենի՝ նշված հանձնաժողովը պետք է ֆինանսավորվի ՀՀ պետական բյուջեից՝

<sup>6</sup> <http://www.minfin.am/main.php?newid=83&mode=news&lang=1>

<sup>7</sup> МСФО необходимость или пятое колесо (Деловой экспресс, 23.ІІІ.2010).

վերը նշված խնդիրներից խուսափելու համար: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում համապատասխան միջոցառումներ են իրականացվում ՖՀՄՄ-ների ներդրման ուղղությամբ, ինչի մասին են վկայում «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում 26.12.2008 թ. կատարված փոփոխությունները, ըստ որի՝ ՀՀ բանկերը, վարկային կազմակերպությունները, վճարահաշվարկային կազմակերպությունները, արժեթղթերի շուկայում հաշվետու թողարկողները, ներդրումային ընկերությունները, կարգավորվող շուկայի օպերատորը, կենտրոնական դեպոզիտարիան, ապահովագրական ընկերությունները, վերաապահովագրական ընկերությունները, ապահովագրական բրոքերները ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմեն և ներկայացնեն իրենց հիմնադիրներին, իսկ օրենքով սահմանված կարգով՝ նաև պետական մարմիններին՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և միջազգային ստանդարտների ուղեկցույցներին համապատասխան<sup>8</sup>: ՀՀ Ազգային ժողովի կատարած նշված փոփոխությունները լրացուցիչ դրական կողմեր ունեն ֆինանսաբանկային ոլորտի կազմակերպությունների համար, քանի որ մինչ այժմ նրանք պարտավոր էին պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք պետք է համապատասխանեին ինչպես ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին (ՀՀՀՀՄ), այնպես էլ ՖՀՄՄ-ներին: Օրենքով նաև ամրագրված է, որ այլ սուբյեկտներ ևս կարող են ֆինանսական հաշվետվություններ կազմել և ներկայացնել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և միջազգային ստանդարտների ուղեկցույցներին համապատասխան, իսկ այն կազմակերպությունները, որոնց գործունեության հասույթը գերազանցում է մեկ միլիարդ դրամը, կամ հաշվետու տարվա վերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է մեկ միլիարդ դրամը, պետք է հրապարակեն իրենց ֆինանսական հաշվետվությունները միայն արտաքին աուդիտ անցնելուց հետո՝ աուդիտորական կազմակերպության եզրակացության հետ<sup>9</sup>: Մույն փոփոխությունները բանկերի համար պարտադիր են 2009 թ. հունվարի 1-ից, իսկ այլ ֆինանսական կազմակերպությունների համար՝ 2010 թ. հունվարի 1-ից: ՀՀ-ում գործող և էմիտենտ համարվող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների համապատասխանեցումը ՖՀՄՄ-ներին կբարձրացնի օտարերկրյա ներդրողների վստահությունը դեպի հայաստանյան ընկերությունները, քանզի ժամանակակից, դինամիկ զարգացող գործարար աշխարհում ներդրողներին առաջին հերթին անհրաժեշտ է ընդգրկուն, թափանցիկ և հասկանալի տեղեկատվություն՝ ներդրումային ճիշտ և ցածր ռիսկային որոշումներ կայացնելու համար: Այս ստանդարտների ընդունումը

<sup>8</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին (ընդունվել է 26.12.2008), [www.arlis.am](http://www.arlis.am)

<sup>9</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին (ընդունվել է 10.12.2009), [www.arlis.am](http://www.arlis.am)

հիմք կդառնա հայաստանյան և օտարերկրյա ընկերությունների համար ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արտաքին աուդիտի միասնական՝ միջազգայնորեն ընդունելի օրենսդրական դաշտ ստեղծելու և կատարելագործելու համար: ՀՀ կառավարության նշած գործընթացը հետևողականորեն շարունակելու դեպքում այն ի վերջո կհանգեցնի ՀՀ-ում գործող խոշոր կազմակերպությունների ինտեգրմանը համաշխարհային բիզնես միջավայրին: Միջազգային ստանդարտները կբարձրացնեն կազմակերպությունների ներկայացրած ֆինանսական հաշվետվությունների թափանցիկության և արժանահավատության աստիճանը, ինչը հնարավորություն կտա խթանելու նորանոր օտարերկրյա ներդրումներ, կհանգեցնի կապիտալի և արժեթղթերի շուկաների զարգացմանը, ինչպես նաև անհրաժեշտ պայմաններ կստեղծի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների առավել արդյունավետ կառավարման համար: Այս ստանդարտների կիրառման շնորհիվ կստեղծվի մի իրավիճակ, որում վարկատուներն ու ներդրողները հնարավորություն կստանան ֆինանսական հաշվետվությունների հիման վրա գնահատելու ընկերության կատարողականը, այն պարագայում, երբ դրանք կազմվել են ուղղակիորեն համադրելի, վստահելի և միջազգային ճանաչում ունեցող սկզբունքների հիման վրա՝ անկախ նրանից, թե որ երկրում է գործում տվյալ ընկերությունը: Փորձը ցույց է տալիս, որ զարգացող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, միջազգային ստանդարտների կիրառման հարցում առանց վարչական լծակներ գործադրելու դժվար է հասնել էական հաջողությունների, քանի որ շատ գործարարներ այս գործընթացների մեջ տեսնում են միայն բացասական կողմեր: Որպես նոր ստանդարտների ներդրմանը ընդդիմանալու պատճառ՝ կարելի է նշել այն հանգամանքը, որ այս գործընթացը պահանջում է ֆինանսական և այլ ռեսուրսներին առնչվող ծախսեր. ընկերություններն ու նրանց խորհրդատուները պետք է սովորեն նոր տերմինաբանություն և հաշվապահության վարման մանրամասներ, ինչպես նաև որոշակի փոփոխություններ կատարեն օգտագործվող համակարգչային ծրագրերում: Չնայած այս մարտահրավերների առկայությանը՝ երկարաժամկետ հեռանկարում ընկերությունները միանշանակ մեծապես կշահեն: Բացի այս խոչընդոտներից, ՀՀ-ում գոյություն ունի ևս մեկ և թերևս բոլոր նշվածներից առավել էական խոչընդոտ՝ ստվերային տնտեսությունը՝ իր բացասական կողմերով: Գաղտնիք չէ, որ Հայաստանում շատ գործարարներ կիրառում են տարաբնույթ հնարքներ իրենց եկամուտների իրական ծավալները թաքցնելու նպատակով, մինչդեռ վաղուց ողջ քաղաքակիրթ աշխարհին հայտնի են բաց և թափանցիկ աշխատելու առավելությունները, որոնցից ՀՀ-ում թերևս ամենաարդիականը ֆինանսավորման արտաքին համեմատաբար էժան աղբյուրներից օգտվելու անգնահատելի հնարավորությունն է հատկապես հայաստանյան բանկային համակարգի՝ խոշոր ֆինանսական միջոցներ տրամադրելու անկարողության պայմաններում: Այդ մասին է վկայում արտասահմանյան բանկային խմբերի ներգրավվածությունը հայաստանյան քիչ թե շատ լուրջ ներդրումներ պահան-

ջող նախագծերի իրականացման գործում: Թերևս այս վերջին հանգամանքը հայրենի գործարարներից շատերն արդեն իսկ հասկացել են, որով էլ շատ դեպքերում պայմանավորված էր նրանց պատկանող ընկերություններում մինչև այս օրենքի ընդունումն անկախ աուդիտի անցկացումը: Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ներդրման ճանապարհին կարևոր խոչընդոտ է նաև հայաստանյան կազմակերպություններում կորպորատիվ կառավարման սկզբունքների բացակայությունը, քանի որ ՀՀ-ում գործող խոշոր ընկերությունների գերակշիռ մասի սեփականատերերը նաև այդ նույն ընկերությունների փաստացի ղեկավարներն են, որի հետևանքով բացակայում է ընկերության փաստացի ղեկավարումն իրականացնող անձանց աշխատանքի գնահատման անհրաժեշտությունը: Վերջինիս մեծապես կարող են աջակցել ընկերության՝ պատշաճ կերպով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները:

Կարելի է եզրահանգել, որ հայաստանյան գործարարները վաղ թե ուշ պետք է գիտակցեն բիզնեսի վարման միջազգային ստանդարտներին անցնելու անհրաժեշտությունը և ընդհանրապես բաց և թափանցիկ աշխատելու առավելությունները, իսկ այդ ճանապարհին էական դեր կարող է ունենալ ՖՀՄՄ-ների կիրառումը: Միայն այս պարագայում հայաստանյան ընկերությունները հնարավորություն կստանան ինտեգրվելու համաշխարհային բիզնես միջավայրին և գործակցելու արտասահմանյան ընկերությունների հետ հավասար դիրքերից:

## **ПРОЦЕСС ВНЕДРЕНИЯ МЕЖДУНАРОДНЫХ СТАНДАРТОВ ФИНАНСОВОЙ ОТЧЕТНОСТИ В РА**

АЗИЗБЕКЯН В. С.

### **Резюме**

То, что в XXI веке бизнес не может нормально развиваться и быть конкурентоспособным без интегрирования в мировую бизнес-среду, не вызывает сомнений. Международный финансовый кризис показал значение и необходимость высококачественных стандартов финансовой отчетности. Вышесказанное особенно актуально для армянских предприятий, которые в силу всем известных причин должны преодолевать дополнительные сложности, связанные с закрытыми границами и чрезмерно ограниченным внутренним рынком. Интеграция в мировую бизнес-среду для армянских предпринимателей является жизненной необходимостью. Одним из локомотивов на пути продвижения в этом нелегком, но важнейшем деле однозначно может стать переход на международные стандарты финансовой отчетности (МСФО).